

ՎԱՍՏԱԿԱՐԱՍ ՀԱՅԱԳԵՏԸ

(ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի հայագետ, լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի ծննդյան 75-ամյակը:



Շուրջ հիսուն տարի է, ինչ անվանի լեզվաբանը հայագիտության մեջ քացել է իր ակոսը, որտեղ ծլարձակում են նրա ստեղծագործ մտքի հունդերը: Նրա հետազոտությունների ծիրի մեջ մտնում են ժամանակակից գրական հայերենի կառուցվածքի, նրա զարգացման օրինաչափությունների, ոճաբանության, լեզվական տարբեր մակարդակների ու դրանց վտխարաբերության առանցքային հարցեր, քառարանագրական աշխատանք (որպես խմբագիր, գլխավոր խմբագիր), հայերենի ուսուցման խնդիրներ (դասագրքերի, ձեռնարկների, մեթոդական գրականության ստեղծում), լեզվի կանոնարկման տե-

սական և գործնական հարցեր և այլն:

Ս. Աբրահամյանը ծնվել է 1925թ. փետրվարի 14-ին, Արցախում՝ Հադրութի շրջանի Տումի գյուղում: Տակավին պատանի էր, երբ հայտնվեց Մեծ հայրենականի քոցերի մեջ, ծանր վիրավորվեց, երկարատև ապաքինումից հետո գորացրվեց և վերադարձավ իր ծննդավայրը:

Գիտության հանդեպ ունեցած քնածին հակումները նրան տարան ԵՊՀ քանասիրության ֆակուլտետ, որտեղ աշակերտեց անվանի հայագետներ Գ. Մևակին, Գ. Դավանցյանին, Էդ. Աղայանին, Ա. Դարիբյանին և ուրիշների, որոնք էլ նախանշեցին ապագա գիտնականի անցնելիք ուղին:

Ս. Աբրահամյանը 1953-ին ստացել է քանասիրական գիտությունների թեկնածուի, 1966-ին՝ դոկտորի գիտական աստիճաններ, 1970-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1996-ից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս է:

Ակադ. Ս. Աբրահամյանը ժրաջան մեղվի աշխատասիրությամբ ստեղծել է գիտական պատկառելի ժառանգություն՝ շուրջ երկու տասնյակ գրքեր ու հարյուրից ավելի գիտական հոդվածներ՝ սփռված զանազան պարբերականներում:

Ս. Աբրահամյանի ուսումնասիրություններում առաջ են քաշվել նոր հարցադրումներ, հայոց լեզվի և հատկապես նրա քերականական կառուց-

վածքի շատ ըմբռնումներ վերանայվել են, ճշգրտվել կամ մեկնաբանվել նորովի:

Նրա գիտական վաստակի մեջ ուրույն արժեք է ներկայացնում հայերենի ձևաբանական համակարգի՝ խոսքի մասերի քննությունը:

«Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965) ծավալուն մենագրության մեջ նա խոսքի մասերի համակարգի ու դասակարգման հարցում եղած հակասությունների հաղթահարումը հասցրեց տրամաբանական ավարտի: Նա հիմնավորել է, որ այդ համակարգը ոչ թե նույն բնույթի, նույն մակարդակի, այլ տարաբնույթ ու տարաստիճան հակադրությունների ամբողջություն է, որի նկատմամբ պետք է կիրառել բազմաստիճան դասակարգման սկզբունք: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռել՝ ճշտելու խոսքի մասերի ամբողջ համակարգի պատկերը, բացահայտելու նրանց միջև եղած անմիջական և միջնորդական հակադրությունները, ամեն մի խոսքի մասի բուն էությունը:

Այնուհետև յուրաքանչյուր խմբի խոսքի մասերը դասակարգվում են ըստ այդ խմբի բնորոշ հատկանիշի: Նշենք, որ վերաբերականը (եղանակավորող բառեր, եղանակավորիչներ), որին, որպես ինքնուրույն խոսքի մասի, անդրադարձել էին նաև այլ լեզվաբաններ, հայ քերականագիտության մեջ ընդունվել և բուհական ու դպրոցական դասընթացներում տեղ է գտել Ս. Աբրահամյանի հիմնավոր ուսումնասիրությունից հետո (1959):

Ակադ. Ս. Աբրահամյանը հայերենի գրեթե բոլոր խոսքի մասերը ենթարկել է համակարգային համակողմանի ուսումնասիրության: Այդ բոլորի մեջ իր քերած գիտական նորությամբ, բացի վերաբերականներից, որի մասին խոսվեց, առանձնանում է նաև դերանուններին նվիրված ծավալուն ուսումնասիրությունը («Արդի հայերենի դերանունները», 1956): Ամենաշատ տարակարծությունների տեղիք տված այս խոսքի մասի ուսումնասիրության մեջ գիտնականն իր համոզիչ խոսքն է ասում դերանվանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ: Նա քննել, բացահայտել է դերանվան ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները, առաջին անգամ ուսումնասիրել է դերանունների ոճական կիրառությունները, այլև նրանց կազմությունն ու բառակազմական նշանակությունը:

Ակադ. Ս. Աբրահամյանը կարևոր ներդրումներ ունի հայերենի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում: Նա հայերենի շարահյուսական համակարգը համալրել է նոր բաժնով՝ «Նախադասությունների կապակցություն»: Նախադասությունների կապակցությունը քննել է որպես լեզվական մակարդակի իրողություն, որ ունի իր լեզվական-կառուցվածքային օրինաչափությունները՝ կապակցման եղանակներ, միջոցներ, վեր է հանել բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների և ինքնուրույն նախադասությունների կապակցման ընդհանրություններն ու յուրահատկությունները: Միակազմ նախադասությունը՝ որպես նախադասության ինքնուրույն տեսակ, հայ քերականագիտության մեջ մտել է Ս. Աբրահամյանի ուսումնասիրության շնորհիվ («Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր», 1962):

Նախադասության այս տեսակի ընդունումը, նրա կառուցվածքային հատկանիշների ուսումնասիրումը հիմք դարձան նաև «երկկազմ նախադասություն» տերմինի ու հասկացության ընդունման՝ այդպիսով ամբողջացնելով պարզ նախադասության կառուցվածքային տեսակների համակարգային պատկերը՝ միակազմ և երկկազմ:

Ակադ. Ս. Արրահամյանը համակարգայնություն մտցրեց մահ բարդ ստորադասական մախադասության կառուցվածքի գնահատության մեջ: Այդ համակարգը մահ ենթակայացնում է *երկբադադրիչ և բազմաբադադրիչ բարդ ստորադասական մախադասություններ* դասակարգումով, իսկ վերջինս՝ *ենթաստորադասական, համաստորադասական և տարաստորադասական* տեսակներով: Տարաստորադասությունը, որ բարդ ստորադասական մախադասությունների ամենատարածված տեսակն է, հայ քերականագիտության մեջ, մինչև Ս. Արրահամյանի աշխատությունները, նկատված ու դիտված չէր:

Գեոևս 1959թ. Ս. Արրահամյանը արծարծել է իր նկատառումները լեզվաբանական մի կարևոր խնդրի ամենությամբ. մահ ամառ է քաշել և հիմնական գծերով քննել լեզվի բառապաշարի, ձևաբանական ու շարահյուսական կառուցվածքների (մեղ ամուսնով՝ բառի բառական, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների) փոխհարաբերության հարցերը:

Այս և վերը նշված որոշ հարցերի քննությունը կարևորվում է լեզվի թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա ուսումնասիրության բնագավառում: Այն ունի մահ տեսական նշանակություն. օգնում է լեզվի, իբրև ամբողջական համակարգի, ավելի խոր ու բազմակողմանի ճանաչմանը: Խնդրո առարկայի այդօրինակ քննությունը իր ընդհանուր նշանակությամբ դուրս է գալիս հայերենի ուսումնասիրության սահմաններից և ունի ընդհանուր լեզվաբանական արժեք:

Ոճաբանական հարցերի ուսումնասիրությունը տեղ է գտել մահ «Արդի հայերենի դերանունները» (1956), «Հայոց լեզու. բառ և խոսք» (1978, 1986), «Ժամանակակից գրական հայերեն» (1981) և այլ գրքերում: Պատրաստ է հրատարակության ոճաբանությանը նվիրված մահ մենագրությունը:

Ակադ. Ս. Արրահամյանի գործունեությունից անբաժան է գիտական կազմակերպչական աշխատանքը: ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում շուրջ չորս տասնամյակ լինելով ժամանակակից հայերենի բաժնի վարիչ՝ մահ իրեն դրսևորել է որպես գիտական աշխատանքի հմուտ կազմակերպիչ: Նրա գիտական ղեկավարությամբ, իր իսկ կազմած ծրագիր-մախագծի հիման վրա ստեղծվել է «Ժամանակակից հայոց լեզու» սովորածավալ եռահատոր աշխատությունը: Եռահատորի մի շարք կարևոր բաժինների հեղինակը ինքը՝ Ս. Արրահամյանն է: Նրա գիտական ղեկավարությամբ և մասնակցությամբ ստեղծվել է «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» կոլեկտիվ աշխատությունը, որն այդ կարևոր հիմնահարցի համակողմանի ուսումնասիրությունն է:

Ս. Արրահամյանն զգալի ներդրում ունի հայերենի բառագիտության ուսումնասիրման և բառարանագրության բնագավառում, զբաղվել է ժամանակակից հայերենի ուղղագրության համակարգի և մահ սկզբունքների մշակման հարցերով:

Անվանի գիտնականն ակնառու վաստակ ունի հայոց լեզվի դպրոցական ուսուցման գործում. մահ գրել է դպրոցական դասագրքեր, ձեռնարկներ, բազմաթիվ գիտամեթոդական հոդվածներ, արևմտահայերենի դասագիրք (սփյուռքի դպրոցների համար՝ հեղինակակցությամբ): ՀՀ կրթության մախարարությունը, բարձր գնահատելով մահ վաստակն այս մարգում, մահն պարգևատրել է Խ. Արովյանի մեդալով:

Իր բազմամյա գիտական գործունեությանը զուգընթաց, Ս. Արրահամյանը դասախոսել է հանրապետության բուհերում, ղեկավարել քսանից ավելի ասպիրանտների, ընդդիմախոսել բազմաթիվ թեկնածուական և դոկ-

տորական ատենախոսություններ:

Ակադ. Ս. Արրահամյանն ակտիվ գործունեություն է ծավալել հայերենի կանոնարկման բնագավառում իր տարբեր բնույթի աշխատանքներով՝ Հայաստանի կառավարությանն առընթեր նախկին տերմինաբանական կոմիտեում և այժմյան հայերենի բարձրագույն խորհրդում իր գործուն մասնակցությամբ:

Ակադ. Ս. Արրահամյանն այսօր էլ գործում է գիտության նկատմամբ ունեցած մեծ նվիրումով. հայագիտությունը նրանից տակավին սպասելիքներ ունի:

Եռանդ, կորով և արևշատություն մաղթենք շնորհաշատ լեզվաբանին՝ բարոյապես անաղարտ, առաքինի մտավորականին, հայագիտության անխոնջ նվիրյալին:

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր